ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ № 5
«ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-22-8/1» ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՆԱՆՇՄԱՆ ՀԱՐՑՄԱՆ (ԳՀ) ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

ք. Երևան 04.04.2022թ.
Ժամը 16:20

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահ
- ՀՀ ՊՆ ՆՏԱ գլխավոր վարչության ԹԱ վարչության պետ Հ. Մելիքյան,
գնահատողներ՝
- ՀՀ ՊՆ ԳԿ զինանշանային բաժնի պետի ՊԺԿ Ա. Բարսեղյան
- ՀՀ ՊՆ ՆՏԱ ԳՎ ԹԱ վարչության ապահովման 2-ին բաժնի գլխավոր մասնագետ Է. Համբարձումյան,
- ՀՀ ՊՆ ԳԿ վերլուծության և պլանավորման բաժնի ավագ մասնագետ Ա. Բարսեղյան,

Գնումները համակարգող՝
ՀՀ պաշտպանության նախարարության գնումների կազմակերպման վարչության գնումների կազմակերպման 2-րդ բաժնի գլխավոր մասնագետ Լ. Միքայելյան:

«ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-22-8/1» ծածկագրով ԳՀ ընթացակարգի հանձնաժողովի նիստի մասին.

(Լ. Միքայելյան)

«ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-22-8/1» ծածկագրով ԳՀ ընթացակարգի մրցույթի 1-ին չափաբաժնի մասով գնահատող հանձնաժողովի որոշմամբ ընտրված մասնակից էր ճանաչվել «Մեգամար» ՍՊԸ (այսուհետ՝ նաև Մասնակից): Համաձայն ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 32-րդ կետի 12-րդ ենթակետի Մասնակցին առաջարկվել է կնքել պայմանագիր, սակայն Մասնակիցը «Գնումների մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի համաձայն սահմանված ժամկետում պայմանագիր չի կնքել:

ՀՀ ֆինանսների նախարարություն է ներկայացվել Մասնակցի վերաբերյալ անհրաժեշտ փաստաթղթերը՝ գնման գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու գործընթաց նախաձեռնելու նպատակով:

Գնումների կազմակերպման վարչությունը մարտի 31-ին փոստի միջոցով Մասնակցից ստացել է ծրար, որը ուղարկվել է Ռուսաստանի դաշնությունից ս/թ մարտի 9-ին: Ծրարում առկա է եղել կնքված պայմանագիր 2 օրինակից, որակավորման և պայմանագրի կատարման ապահովումների տուժանքների բնօրինակները: Քանի, որ 1-ին չափաբաժնի մասով «Մեգամար» ՍՊԸ միակ մասնակիցն էր, իսկ պայմանագրով նախատեսված էր ապրանքի ձեռքբերումը 1-ին եռամսյակ, հանձնաժողովը որոշեց, որ օրենսդրությամբ սահմանված կարգով Մասնակցի հետ կկնքվի պայմանագիր պատասխանատու ստորաբաժանման կողմից ներկայացված նոր գնման ժամանակացույցով, ինչպես նաև տեղեկացնել ՀՀ ֆինանսների նախարարությանը Մասնակցին գնման գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու գործընթացը կասեցնելու նպատակով:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

Հանձնաժողովի նախագահող (ԳԱՊ)՝ Հ. Մելիքյան

Գնահատողներ՝ Ա. Բարսեղյան

Է. Համբարձումյան

Ա. Բարսեղյան

Գնումները համակարգող՝ Լ. Միքայելյան